ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Մայրության և գեղեցկության տոնի առթիվ իր շնորհավորական ուղերձն է հղել

07.04.2025

«Սիրելի՛ կանայք,
Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ: Ապրիլի 7-ը մեր ընտանեկան արժեքները մեկ անգամ ևս վերահիմաստավորելու, մայրությունն ու գեղեցկությունը մեծարելու օրն է:
Եվս մի գեղեցիկ առիթ է արտահայտելու ձեր նկատմամբ մեր հարգանքը, ակնածանքն ու սերը: Եվս մի առիթ է գնահատանքի և երախտագիտության խոսքեր հնչեցնելու նրանց հասցեին, ովքեր մեր ընտանեկան երջանկության կերտողներն ու պահապաններն են, ովքեր մեր հասարակության առաջընթացի և ազգային վերելքի ամենաեռանդուն ուժերն են:
Կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ ձեզ ընտանեկան սեր ու ջերմություն, աշխատանքային հաջողություններ, հասարակական եռանդուն, արդյունավետ գործունեություն և հատկապես՝ կանացի հմայք ու գեղեցկություն»: